Գործարանին մէջ աշխատողներուն մեծամասնութիւնը Արսլանպէկի, Օվաճըզի եւ Պարտիզակի հայ գիւղացիներն էին, որոնք կանոնաւոր ու առատ աշխատավարձեր բարեքներ եւ գործարանին հովանաւորութիւնը սկսան վայելել: Վարպետի պաշտօն ստանձնեց եւ երկար տարիներ վարեց Սիմ հանի գիւղէն Արսլանպէկ գաղթած ջուլհակ Ստեփան, որուն ծննդավայրին եւ ընտանիքին մէջ ուստայանկութիւնը պայմանական արհեստ էր:

Նշենք, որ ջուլհակ Ստեփանի ընտանիքը, որ Ստեփանեան ազգանունը առաւ, հետագային երկու ճիւղի բաժնուեցաւ, որոնցմէ մէկը, քահանայի սերունդ դառնալով Տէր Ստեփանեան ազգանունով ճանչուեցաւ: Մեծ եղբունէն ետք Ստեփանեան ընտանիք մը Թեսաղոնիկէ հաստատուեցաւ:

Սուլթան Ապտիլ Մեճիտ 9 Ապրիլ 1845ին քննական այցելութիւն մը տուաւ նորակառոյց գործարանին եւ շատ զոհ մնաց: Այս առիթով ան Նիկոմիդիոյ առաջնորդ Աղաւնի եպիսկոպոսը երկու անգամ խիլալով (պատուոյ հագուստ) պատուեց եւ պատուանշան շնորհեց անոր: Սուլթանը ուզեց պարգեւատրել նաեւ գործարանին հիմնադիր վառօղակային Յովհաննէս Բէկ Տատեանը, բայց ան խնդրեց, որ փոխանակ գինք պարգեւատրելու, պետութիւնը հացագին մը շնորհէ Պոլսոյ Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցին: Սուլթանը ընդառաջեց խնդրանքին եւ օրական երեսունեօթը ու կէս օխա (մօտաւորապէս 45 քիլօ) հաց եւ մսագին յատկացում ճշդեց:

### ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐ


Նիկոմիդիոյ շրջանին

մէջ հայկական առաջին վարժարանները կառուցուած էին Նիկոմիդիոյ եւ Պարտիզակի մէջ, 1820ին: 1845ին Թամլըզի մէջ կառուցուեցաւ Տատեան վարժարանը, 1847ին՝ Արսլանպէկի Մամիկոնեան վարժարանը: 1850ին վարժարան բացուեցաւ ինչ գիւղին մէջ, իսկ 1860ին Նիկոմիդիոյ մէջ բացուեցաւ բողոքականներու վարժարանը:

Վարժարաններու կրթական ծրագիրին մէջ, յատկապէս 1860ական տարիներուն ներմուծուեցան տրամաբանութիւն, տոհմային եւ սրբազան պատմութիւն, քերականութիւն, քրիստոնէական վարդապետութիւն, բարոյական դաստիարակութիւն եւ թուրքերէն:

### ՀԱՅԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿԵՕԲ ԿԵՕԶԻ ՄԵՉ

Կէօք Կէօզ գիւղ մըն է Ազ Հիսարի եւ Գուրտպէլէնի միջեւ, սարաւանդի մը վրայ, շրջապատ-



ւած Գուրտպէլէնի ժայռոտ լեռներով, Ադ Հիսարի եւ Կէյվլէի բարեբեր դաշտերով, Սաքարիա գետով եւ հանդիպակաց լեռներով: Անիկա իրարմէ որոշ հեռաւորութեամբ երեք թաղերէ բաղկացած է. Վերի թաղ, Վարի թաղ եւ Փոքր գիւղ (Քիւլքիւք - քէօյ):

Կէօք Կէօզ մինչեւ 1840 զուտ թրքաբնակ էր, բայց այդ ժամանակ գուրտպէլէնցի հայ մը՝ Դոտականց պապը հոն, Քիւլքիւք Քէօյ թաղամասին մէջ շէրամատուն կարտէզ մը գնելով մնալուն բնակութեան հիմեր դրաւ. անոր հետեւեցան Դէմառնողեցի, Եսայեան եւ այլ ընտանիքներ:

Այսպէսով, կարճ ժամանակի ընթացքին Կէօք Կէօզի Քիւլքիւք Քէօյ թաղամասը ամբողջ հայերուն ձեռքը անցաւ եւ զուտ հայաբնակ դարձաւ:

Կէօք Կէօզի հայ ընտանիքները գրեթէ բոլորն ալ շէրամատուններ հիմնեցին եւ շէրամատուութիւնը անոնց տնտեսութեան հիմը դարձաւ. ժամանակի ընթացքին շէրամատուներուն թիւը հասաւ յիսուններեքի: Շէրամատուներուն մեծ մասը միաժամանակ գիւղացիներուն բնակարաններն էին:

### ԱՍԱԲԱԶԱՐ ՀԱՅԱՇԱՏ ՔԱՂԱՔ

Ատաբազար քաղաք մըն է Վուսիօրէն 120 քիլոմետր արեւելք, Սաքարիա գետի արեւմտեան ձախ ափին, ընդարձակ եւ բարեբեր դաշտի մը մէջ, որուն արեւմուտքը կը գտնուի Սապանճա լիճէն գոյացած Եւաւաջ սուն: Անիկա դէպի Պոլս հին գիւղուորական ճամբուն վրայ յենակէտ եղած է, ուր Յուստինիանոս կայսեր ժամանակներէն կառուցուած քարաշէն կամուրջ մը պահպանուած է: Շրջանը կ'արտադրէ ցորեն, ծխախոտ, պտուղ եւ բանջարեղէն. քաղաքը ներկայիս 150 հազար բնակիչ ունի:

Ատաբազարի հիմնադիրները Ակնի կողմերէն դաղթական հայեր եղած են, որոնք ժէ՛ դարուն սկիզբը, մօտաւորապէս 1610ին հոն հաստատուած են: Սաքարիայի ողողումներէն պաշտպանուելու համար անոնք յարաբերաբար քիչ մը բարձր վայրի մը վրայ բնակավայր կառուցեցին, զոր կոչեցին Ատա, որ թրքերէն կղզի կը նշանակէ: Անիկա առեւտուրի եւ արհեստներու կեդրոնի վերածուեցաւ եւ կոչուեցաւ պազար՝ շուկայ, եւ այսպէսով անուանուեցաւ Ատաբազար: Հետագային Արարատեան դաշտէն եւ Պարսկաստանի կողմերէն գաղթականներ ստուարացուցին համայնքը: Աւանդութեան մը համաձայն




Ատաբազարի կամ կալիքիայէն հայ գաղթականներն եւս հաստատուած են հոն:

Ատաբազար մինչեւ ժ.թ. դարուն սկիզբը եւ կէսերը գիւղ մըն էր, բայց այնուհետեւ հայկական գաւառներէ գաղթականներու հոսքով եւ նաեւ թուրքերու, յոյներու եւ հրեաներու հաստատումով 1840-1850ական տարիներուն անհամեմատօրէն բարգաւաճեցաւ, ստուարացաւ եւ բարեկարգ քաղաքի վերածուեցաւ: Անիկա գլխաւոր չորս թաղերու բաժնուեցաւ, իւրաքանչիւրը իր եկեղեցիով: Հայութեան թիւը հասաւ շուրջ երկու հազար ընտանիք, որոնք բնակչութեան մօտաւորապէս կէսը կազմեցին, իսկ մնացեալները մեծ մասամբ ուսմիլիթի թուրքեր, կովկասցի իսլամ գաղթականներ, յոյներ ու հրեաներ էին:

### ԲՈՂՈՔԱԿԱՆ ՇԱՐՓՈՒՄԸ ԲԻՒԹԱՆԻՈՅ ՄԵՉ

Հայութեան մէջ բողոքական շարժման սկզբնաւորութեան ժամանակ, 1830-1840ական տարիներուն ամերիկացի միսիոնարներ մուտք գործեցին Բիւթանիոյ կողմերը եւ յատկապէս Նիկոմիդիոյ եւ Պարտիզակի մէջ հետեւորդներու փոքրիկ խմբակներ կազմեցին:

Բիւթանիոյ մէջ բողոքական շարժման ամէնէն եռանդուն անդամը դարձաւ Նիկոմիդիոյ վերթանէս քահանայ. Գրիգորեան - Չըրթընեան որ սկսաւ բողոքականութիւն քարոզել Պոլսոյ, Նիկոմիդիոյ եւ Կեսարիոյ շրջաններուն մէջ: Մատթէոս պատրիարք փիլիսոփայուելով ընկելով զգաստութեան հրաւիրեց զայն, իր մօտ կանչեց եւ փորձեց համոզել հրաժարելու նոր դաւանան-



քէն, բայց ապարդիւն: Վրթանէս քահանայ հայհոյանքներով հեռացաւ պատրիարքին մօտէն եւ շարունակեց իր քարոզչական աշխատանքները, աւետարանչական շրջագայութիւններ կատարելով հայկական գաւառներու մէջ:

Մատթէոս պատրիարք հարկադրաբար Արմաշի վանքը ուղարկեց անկարգապահ քահանայ, ուր այս անգամ ան սկսաւ քարոզչութիւն կատարել վանականներուն. յետոյ զրկուեցաւ Կեսարիոյ Սուրբ Կարապետի վանքը, ուր եւս շարունակեց նոյն ընթացքը: Ի վերջոյ 1846ին պատրիարքը բանադրեց զայն եւ արտաքսեց հայ եկեղեցիէն: Նոյն օրերուն, 1 Յուլիս 1846ին Պոլսոյ մէջ կազմուեցաւ հայ աւետարական եկեղեցին՝ քառասուն անդամներով:

Բողոքականութիւնը բաւական մեծ յաջողութիւն ունեցաւ Նիկոմիդիոյ շրջանին մէջ, ուր առանձին միութիւն կազմուեցաւ, իսկ Պարտիզակի մէջ աստուածաբանական դպրոց հիմնուեցաւ:


### ՍՍՄՈՒԼ

Բիւթանիոյ շրջանին մէջ 1848ին սկսաւ հրատարակչական շարժումը, երբ Նիկոմիդիոյ մէջ հիմնուեցաւ «Սուրհանդակ» թերթը, իսկ Պար-



տիզակի մէջ՝ «Րանբեր Պարտիզակեան»ը սակայն տպագրական միջոցներու չզոյլութեան պատճառով երկու թերթերու ալ ձեռագիր վիճակով կը հրատարակուէին, եւ ժամանակ մը ետք դադրեցան:

Նիկոմիդիոյ մէջ 1850ին հիմնուեցաւ «Հայրենասէր» երկչաբթերթը՝ Աբրահամ Մուրատեանի ղեկավարութեամբ: Անոր հայրը՝ հալէպցի Մուրատ վարժապետ Աբրահամեան երկար ժամանակ Նիկոմիդիոյ մէջ ուսուցչութեան պաշտօն վարած էր: Տասնեօթամեայ Աբ-




րահամ երբ սկսեց թերթի խմբագրութեան տպարանական մասնու շուկայով ստիպուած էր ձեռքով տպել: Գրիգորը իր ձեռքով կը շարէր, թուղթը կը թրջէր եւ վրան կը դնէր, անոր վրան ալ ուրիշ թերթ մը կը դնէր եւ վրան բարձրանալով ոտքերով ամուր կը կոխէր եւ այսպէսով մէկ-մէկ թերթը կը տպուէր մէկ էջի վրայ: Յետոյ Աբրահամ մասնու մը ձեռք ձգելով անով սկսաւ տպել թերթը: «Հայրենասէր» կը կոչուէր «լրագիր քաղաքական, ազգային եւ բանասիրական» եւ կը պարունակէր տեղական լուրեր, թղթակցութիւններ եւ վիպակներ:

Աբրահամ Մուրատեան 1853ին Փարիզ փոխադրուելով դադրեցուց «Հայրենասէր»ի հրատարակութիւնը Փարիզի մէջ ան 1860ին հրատարակեց «Փարիզ» թերթը, յետոյ անցաւ Գահիրէ, ուր 1865ին հրատարակեց «Արմանէն» թերթը:



րնկայեց Աւստրիայէն հալածական հունգար յեղափոխականները:

Օսմանեան կայսրութիւնը 1853ին պատերազմի մէջ մտաւ Ռուսիոյ դէմ. հետագային Թուրքիոյ միացան Յրանսա, Մեծն Բրիտանիա եւ Սար-



տինիա: Պատերազմական գործողութիւնները ծաւալեցան Դանուբի, Խրիմի եւ Կովկասեան ռազմաճակատներուն վրայ, իսկ Սեւ ծովուն մէջ նաւամարտեր մղուեցան: Պատերազմը ավարտեցաւ 1856ին, Փարիզի հաշտութեամբ:

Լիբանանի մէջ տիւրքի-մարոնի կռիւներէն ետք, եւրոպական ճնշումի տակ սուլթանը 1861ին ինքնավարութիւն շնորհեց Լեռնալիբանանի:

Սուլթան Ապտիլ Մեճիտ Ա. վերանորոգեց Այա Սոֆիան, կառուցեց Տոլմապազէի պալատը եւ Փրանսական առաջին թատրոնը հաստատեց Պոլսոյ մէջ. մահացաւ 25 Յունիս 1861ին:

### ԱՐՍԼԱՆՊԵԿԻ ԱՍՈՒԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Օսմանեան պետութիւնը որոշած էր բրդեղէն ասուի գործարան մը բանալ Իզմիթի շրջանին մէջ: Արսլանպէկ գիւղին մօտակայքը, Պարտիզակի եւ Օվաճըզի Հանդիպակաց լեռներէն բխող Քիլէզ գետին զօրաւոր հոսանքը յարմարագոյն վայրը նկատուեցաւ գործարանին համար: Ծրագիրին գործադրութիւնը յանձնուեցաւ արքունի վառօղակային Յովհաննէս Բէկ Տատեանի, որ իրբեւ մեքենագէտ սուլթանական հրամանով մեկնած էր Անգլիա ուսումնասիրելու համար հիւսուածեղէնի գործիքները: Յովհաննէս Բէկ իրեն ընկերակից ընտրեց Պօղոս Բէկ Տատեանը, ճարտարապետ Կարապետ Բէկ Պալեանը, Երզրէն Պօղոս Օտեանը եւ Յարութիւն Չոպանեանը. անոնք այցելեցին Արսլանպէկ, տեղւոյն վրայ ուսումնասիրելու գործարանին յատկագիծը եւ իջեւանեցան Ալեքսան Զորպաճի Գասապեանի տունը:

Գործարանը կառուցուեցաւ 1836ին. անոր վիթխարի անիւր՝ մեծ չարխը շինեցին հայ վարպետները, շարժման մէջ դնելով տասնեակներով միքեաններ: Գործարանը գործել սկսաւ 1844ին:

ՈՐԱԿԻ, ԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿԻ..

Շարունակում՝ 5րդ էջէն

Գաղափարական որակի պահպանումը եւ բացակայութիւնը...

Գաղափարական որակի բացակայութիւնը կը բացատրուի...

Թէ ինչ կրնայ ըլլալ այդ որակը, զայն հարկ է տարագրել...

Որպէսզի տոկանք եւ տեւենք իբրեւ ազգ եւ ազգի հատուած...

Գաղափարական որակի նմանակները պատճառ է որ կարծիք...

Որակի հարցը աւելի քան այժմէական է, ամէն կարգի նկատմամբ...

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԴԱՄԱՍԿՈՍ ԴԱՄԱՍԿՈՍ ԼՈՒՍՆԹԱԳ ՄԵԼԻՔԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցի...

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5583 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Table with 11 columns and 11 rows for the 5583 lottery. Columns 1-11, rows 1-11.

- ՆՈՐԻՉՈՆԱԿԱՆ 1. Երկնատուր սնունդ - Մուս: 2. Ամբար, մթերանոց - Չայնանիչ: 3. Դրդապատճառ - Սպասուած փրկիչ: 4. Լծորդութիւն - Մենամարտի: 5. Խայթուածք - Կախարդութիւն: 6. Նախամարդ - Անեփ: 7. Զուարճախօս, ծաղրարան: 8. Մերձաւոր Արեւելքի պատմական երկիրներէն - Խուսթ: 9. Մակարոն միջատ - Հրակէր: 10. Չնջէ՛ - Հրանիւթ: 11. Տեղափոխուած տանու - Խողովակ:

Table with 11 columns and 11 rows for the 5582 lottery. Columns 1-11, rows 1-11.

bezdig\_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item name and Price. Items include Դէյրուսի սակարանի մէջ օտար դրամացիներու...

Table with 2 columns: Item name and Price. Items include ԱՍԿԻ Անգլիական մէկ ոսկի...

Table with 2 columns: Item name and Price. Items include Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը...

Table with 2 columns: Item name and Price. Items include Մէկ փոխար 580 դրամ...

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ) Ձեր նախասիրութիւնը կամ՝ ձեր կատարած ընտրանքը...

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) Ձեր լաւ տրամաբանութիւնը, որ կը վերաբերի ձեր կեանքի...

ԵՐԿՈՒՆԻՆ (22 Մայիսէն 21 Յունիս) Եթէ մեծ գաւակներ ունիք, այսօր պիտի փափաքիք...

ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այսօր դարձեալ պիտի գտնէք ձեր կեանքը դասաւորելու...

ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այսօր դարձեալ պիտի գտնէք ձեր կեանքը դասաւորելու...

ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այսօր դարձեալ պիտի գտնէք ձեր կեանքը դասաւորելու...

ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այսօր դարձեալ պիտի գտնէք ձեր կեանքը դասաւորելու...

ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այսօր դարձեալ պիտի գտնէք ձեր կեանքը դասաւորելու...

ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այսօր դարձեալ պիտի գտնէք ձեր կեանքը դասաւորելու...

ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այսօր դարձեալ պիտի գտնէք ձեր կեանքը դասաւորելու...

ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այսօր դարձեալ պիտի գտնէք ձեր կեանքը դասաւորելու...

ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այսօր դարձեալ պիտի գտնէք ձեր կեանքը դասաւորելու...

ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՄԱՆՄԵՐՈՒՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳ

ԼԻԲԱՆԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՍԿԵԴԱՐԻՆ ԵՒ «ՏԱՐ ԷԼ ՖԱՆ»ԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ



Նախապատեւան լիբանանաւոր աշխուժութեան եւ անոր մէջ իր կարեւոր ներդրումը ունեցած «Տար էլ ֆան» գեղարուեստի կեդրոնի նախագահուհի մը...

«Ժամին Ռուպէյ» գիրքը կարեւոր է ունենալ՝ այցելելով համանուն գուցահանդէսը, որ կը շարունակուի մինչեւ 15 Նոյեմբեր:

ՉՈՐԵՔՇԱՐԹԻ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ 2003 ՊԵՐՏՐՈՒՅԱՆ ԱՄՊՈՏ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՑԵՐԵԿ՝ 27°C ԳԻՇԵՐ՝ 19°C ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 60%

ԱՅՍՈՐ



- Նուագահանդէս՝ «Թրիօ Ֆրամ Ճըմբընի», ժամը 20:00ին, Գերմանական Մշակութային կեդրոն: - Լայ գիրքի 25րդ ցուցահանդէս, Կիլիկիոյ կաթողիկոսարանի «Կիլիկիա» բանգարանի սրահ, մինչեւ 9 Նոյեմբեր: - Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Պի-Ռուբ», «Կեօթե» հիմնարկ, մինչեւ 19 Նոյեմբեր: - Նկարչական ցուցահանդէս՝ «Քալըր Եւր մայն», Ժուլիան Սէյրալիի գործերը, «Էսփաս Էս. Տէ» ցուցասրահ, մինչեւ 15 Նոյեմբեր: - Զետեղման արուեստի ցուցահանդէս «Ըրրոս Քանթիլընթ», Ժիման Մաքքի Պաշոյի գործերը, «Ֆրենել» ցուցասրահ, մինչեւ 23 Նոյեմբեր:

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԼՄՈՒՄ 5 ՆՈՅԵՄԲԵՐ 1953



ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԻ ՈՐԴԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՅԱՆԱԿԻ ՄԸ ԱՐԺԱՆԱՅԱԻ

Ուրախութեամբ կը լսենք, թէ ողբացեալ Արմէն Գարոյի արժանաւոր գաւակը՝ Հրանդ Փաստրմանեան, որ ժընեւի (Ջուիցերիա) համալսարանի մէջ դաստիարակուած է միւլտիմեդիա տեսլականով...

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



## ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԲԱՆԻՆ ԿԵՐԱԲԵՐՈՂ ՅԱՐՑԵՐ

Երիտասարդության և մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանյանը երկու անգամ արժանացել է Վերսալի մեդալի և Վերսալի մեդալի արժանացողների մեջ յոթերորդը մրցում էր Լիբանանի ֆուտբոլի ֆեդերատիվին և Մարպակի Ամանի տնօրենությանը հետ, դաշտին գծով կարգ մը հարցեր լուծելու համար:

Նախարար Յովնանյանը անհրաժեշտ ցուցումները տուա, դիրացնելու համար Լիբանանի ֆուտբոլի ասոցիացիայի խումբին այդ դաշտին վրայ կատարելիք փորձերն ու մրցումները:

Նախարար Յովնանյանը նաև Մարպակի Ամանի տնօրենության արտոնությունն տուա դաշտը վարձու տալու, որպեսզի հոն տեղի ունենան Լիբանանի ֆուտբոլի ախտեանության մրցումները:

## ՕՈՒԸՆ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՆՉԵՍԹՐՐԻ ԴԻՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼԻՔ ՄՐՑՈՒՄԻՆ



Օուլըն

Լիվերպոլի վիրավոր յառաջապահ Մայքլ Օուլըն, թեև Շոթլանդի Պուրթլեյի դեմ (Ռուսաստան) տեղի ունենալիք էր, Է. Է. Ֆ. Ա. ֆուտբոլի մրցաշարին իր մասնակցությունը պիտի չբերե, սակայն ակումբին մարպի ժերար Հուլիե ըսաւ, որ ան բաւական ապահոված ըլլալով պիտի մասնակցի շաբաթավերջին Մանչեսթըր Եունայթեդի դեմ տեղի ունենալիք գագաթի ճակատումին:

Անցան ամիս Արսենալի դեմ տեղի ունեցած մրցումին (Անգլիոյ ախտեանության) վիրավորած Օուլըն, այդ իսկ պատճառով բացակայեցաւ:



Տիկարի

Թուրքիա - Անգլիա Եւրո - 2004ի ֆուտբոլի պտուսի մրցաշարին:

Հինգշաբթի օր Պուրթլեյի մէջ տեղի ունենալիք մրցումին ակնարկելով, Հուլիե ըսեց, որ չ'ուզէր վտանգել Օուլընը, որովհետեւ իրեն համար Մանչեսթըրի դեմ տեղի ունենալիք մրցումը կը նկատուի աւելի կարեւոր:

● ՊԻՐՄԻՆԿԷՄ ՍԻԹԻԻ ֆրանսացի յառաջապահ Քրիսթօֆ Տիկարի, հակառակ անցեալ Օգոստոսին ծունկի վիրաբուժութեան մը եւնթարկուելուն, այդքան ալ լաւ վիճակի մէջ չի գտնուիր, նկատի ունենալով որ այն մտավախութիւնը կայ, որ ան ենթարկուի երկրորդ վիրաբուժութեան մըն ալ:

Տիկարի կը յայտնէ ըսելով, որ իր ակումբին կատարելիք յաջողութիւնները մրցումներին ետք (Վուլվիչի եւ Արսենալի դեմ) ակումբին պատասխանատուներուն հետ խորհրդակցելով պիտի որոշէ, թէ արդե՞ք պէտք է վիրաբուժութեան ենթարկուիլ:

## ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

խանութեան աւարտէն քանի մը ժամ առաջ, Արաքսի քաղաքին պահանջեց շարունակել իբրեւ փոխանցման հանգրուանի վարչապետ, մինչեւ որ կարելի ըլլալ տր դահլիճը կազմել ու յայտարարել:

Ներքին գործոց նախարարի տագնապին լուծումներէն մէկը կրնայ ըլլալ Քորէյի ստանձնումը այդ պաշտօնին, ինչպէս որ ըրե՞ծ էր նախկին վարչապետ Մահմուտ Ապպաս:

Խաղաղութեան բանակցութիւններու գետնի վրայ, Քորէյ պատրաստակամութիւն յայտնած է հանդիպում ունենալու Իւրայէի վարչապետ Արիէ Շարունի հետ, պայմանաւ, որ այդ տեսակցութիւնը շրջաններուն հանաչափելի արդիւններ պաղտեւորիւնէն նկատուած: Ան շեշտեց որ երկուստեք պատմամիջոցներու նկատմամբ: Ան շեշտեց, որ նախօրօք պէտք է ճշդուի, թէ ի՞նչ հարցեր պիտի քննարկուին այդ հանդիպումին:

Իսլամական Համաս շարժումը իր կարգին յայտարարեց, որ պատրաստ է փնտրելու մը յայտարարելու և յարգելու, եթէ Իւրայէ կատարէ պաղտեւորիչ համարումն դեմ յարձակումներ և եթէ փնտրուի համաձայնութիւնը ապահովէ միջազգային պարակցութիւն:

## ՍՓԸՐԶ ԿՐԵՅ ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Էն. Պի. Էյ. Էրէյ-ւան մրցումներուն, Սան Անթոնիո Սփրայ կրէց եղանակի իր երկրորդ պարտութիւնը, երբ 88-80 արդիւնքով պարտուած հեռացաւ Մեմֆիս Կրիվիդի դաշտէն:

Եղանակի իր երրորդ յաղթանակը: Տրք Նուրի Նուրի Նուրի 30 կէտ, իսկ Մամբրիքի անոր խմբակից Սթիւ Եյէ: 18 կէտ եւ 11 էսիս:

Շիքսկոյի մէջ, Պուլ 98-66 արդիւնքով պարտութիւն մը կրէց Հիուսթըն Ռոքեթսը: Տարդ միայն մէկ յաղթանակ արձանագրած Պուլ դաշտ ներկայացաւ առանց Սքոթի Փիլիքի, որ անցեալ շաբաթավերջին Միլուոքի Պաքսի դէմ տեղի ունեցած մրցումին վիրաւորուած էր: Ռոքեթսի մարպիկ Սթիւ Ֆրենսիս նշանակեց 19 կէտ, իսկ անոր խմբակից Եսո Միսկ' 12 կէտ եւ 7 ռիպաւնտ:



Սքոթի Փիլիք



Վիրաւոր Թիմ Տանքըն՝ գետնի ինկած

Պէտք է ըսել, որ Սփրայի կրած այս պարտութեան ընթացքին, խումբին կարեւոր մարպիկներէն՝ Թիմ Տանքըն, որ ցարդ նշանակած էր 10 կէտ, առաջին քրթթըրին վիրաւորուելէ ետք, մրցումը կիսատ ձգեց: Յաղթական կազմին մարպիկներէն՝ Սքոթմայլ Սուիֆթ մրցումին վերջին վայրկեանին հինգ կէտ նշանակելով, իր կազմին ապահովեց եղանակի երկրորդ յաղթանակը: Ան ընդամենը նշանակեց 14 կէտ եւ 8 ռիպաւնտ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Սթիւ Եյէ - Նիւ Օրլինս	90-80
Նիւ Եորք Նիքս - Օրլանտո Մէճիք	75-68
Մեմֆիս Կրիվիդ - Սան Անթոնիո Սփրայ	88-80
Հիուսթըն Ռոքեթս - Շիքսկոյ Պուլ	98-66
Եուրա ձէյ - Միչիգան Վուլվ	93-88
Տայաս Մամբրիքս - Մայեմի Հիթ	103-93
Ֆիլ. Սիքսթըր - Փորթ. Թրէյլ Պլէյբլաք	94-83


Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.

Տեմպլը Նակեթս - Ինտիանա Փէյլըրս  
Հիուսթըն Ռոքեթս - Նիւ Ջրքսի Նէթս  
Լոս Անճելըս Լէյքըրս - Միլուոքի Պաքս  
Մայեմի Հիթ - Սան Անթոնիո Սփրայ

Փորթլենտի մէջ, Թրէյլ Պլէյբլաք 94-83 արդիւնքով պարտութիւն մը կրէց Ֆիլադելֆիա Սիքսթըրսէն: Յաղթական կազմին մարպիկներէն՝ Էյլըն Այվըրսըն, որ նշանակեց 31 կէտ, իր կազմին ապահովեց եղանակի

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.

Տեմպլը Նակեթս - Ինտիանա Փէյլըրս	90-80
Հիուսթըն Ռոքեթս - Նիւ Ջրքսի Նէթս	75-68
Լոս Անճելըս Լէյքըրս - Միլուոքի Պաքս	88-80
Մայեմի Հիթ - Սան Անթոնիո Սփրայ	98-66



Նուրի Նուրի



Էլըն Այվըրսըն (աջից), որ կը փորձէ գերազանցել Պլէյբլաքի մէկ մարպիկը

ՅԱՐԴ տեղի ունեցած մրցումներէն ետք, այժմ դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

● ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ (ԱՏԻՆՏԵԱՆ ԳՕՏԷ)

	ՅԱՂԹ.	ՊԱՐՏ.
Նիւ Ջրքսի Նէթս	2	1
Պուսթըն Սթիքս	2	1
Ֆիլադելֆիա Սիքսթըրս	2	2
Ուաշինկթըն Ուիլքըրս	1	2
Նիւ Եորք Նիքս	1	2
Օրլանտո Մէճիք	1	3
Մայեմի Հիթ	0	4

	ՅԱՂԹ.	ՊԱՐՏ.
Նիւ Օրլինս	3	1
Միլուոքի Պաքս	2	1
Թորոնթո Ռեյթըրս	2	1
Տիլիքսի Փիլաքս	2	1
Ինտիանա Փէյլըրս	2	1
Սթիւ Եյէ	1	3
Շիքսկոյ Պուլ	1	3
Քլիվլենտ Բաւալիրս	0	3

Երկրորդ յաղթանակը: Պլէյբլաքի մարպիկ Ռաշիտ Ռալաս 22 կէտ:

Տայասի մէջ, Մամբրիքս տասը կէտի տարբերութեամբ՝ 103-93, պարտութեան մատնեց իր հիւրը Մայեմի Հիթը, այսպիսով արձանագրելով

	ՅԱՂԹ.	ՊԱՐՏ.
Նիւ Օրլինս	3	1
Միլուոքի Պաքս	2	1
Թորոնթո Ռեյթըրս	2	1
Տիլիքսի Փիլաքս	2	1
Ինտիանա Փէյլըրս	2	1
Սթիւ Եյէ	1	3
Շիքսկոյ Պուլ	1	3
Քլիվլենտ Բաւալիրս	0	3

**ԲԱՆՏԱՌՈՒՄ**

Տեր եւ տիկին Վարդիվառ եւ Սիւզի Գասապեան բախտաւորուած են առջինն զաւակով մը

**ՀՐԱՅՐ**

3 Նոյեմբեր 2003, Պէյրութ

## «ՉԵՍՓԻԸՆԶ ԼԻԿ»

### ՌԵԱԼ ՄԱՍԻՏԻՏ ԱՊԱՀՈՎԵՅ Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ ԻՐ ՏՈՄՍԸ

«ՉԵՍՓԻԸՆԶ ԼԻԿ» ֆուտբոլի մրցաշարին Ա. հանգրուանի մրցումներուն, հակառակ անոր որ Ռեալ Մատրիտ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Փարիզի Պեյլըրսի հետ, սակայն հանդիսացաւ առաջին խումբը, որ ապահովեց Բ. հանգրուանին իր տոմարը, իր կատարած չորս մրցումներէն ապահովելով տասը կէտ:

Նոյն խմբակէն (Չ. խմբակ) ներս տեղի ունեցած Փարիզ - Մարսէյ մրցումին արդիւնքը, որ վերջ գտաւ ի նպաստ ֆրանսուական կազմին (1-0), յաւելեալ պատճառ մը եղաւ, որ սպանական կազմը ապահովէ իր տոմարը:

Անգլիական երկու խումբեր՝ Մանչեսթըր Եունայթեդ եւ Չելսի հանդիսացան երէկուան մրցումներուն մեծագոյն յաղթականները, յաջորդաբար պարտութեան մատնելով Ռեյնսըրսը (3-0) եւ Լաքո Ռոման (4-0): Մանչեսթըրի կոլերը նշանակեցին Նիսթըրույ (43րդ եւ 60րդ), իսկ Չելսիի կոլերը՝ Քրիսթօ (14րդ), Կուլոյնսըն (70րդ), Տաֆ (74րդ) եւ Լէմպարի (80րդ):

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

- Ե. ԽՄԲԱԿ Մանչեսթըր Եունայթեդ (Անգլիա) - Ռեյնսըրս (Սկոտլանդ) 3-0 Փանաթինայքոս (Յունաստան) - Շթուրկարթ (Գերմանիա) 1-3
- Չ. ԽՄԲԱԿ Փարիզի Պեյլըրս (Սերպիա) - Ռեալ Մատրիտ (Սպանիա) 0-0 Փորթո (Փորթուգալ) - Մարսէյ (Ֆրանսա) 1-0
- Լ. ԽՄԲԱԿ Պեյլըրս (Թուրքիա) - Սփարթա Փրակա (Չեխիա) 1-0 Լաքո Ռոման (Իտ.) - Չելսի (Անգլիա) 0-4
- Բ. ԽՄԲԱԿ Սեյլթա Վիկո (Սպանիա) - Այաքս Ամսթըրտամ (Հոլանտա) 3-2 Ֆ. Ք. Պրիմ (Պելճիքա) - Ա. Սէ. Միլան (Իտալիա) 0-1

ՄԱՍԻՏԻՏ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը (թուր մրցումներն ալ տեղի պիտի ունենան ժամը 21:45ին՝ Պէյրութի ժամով).

- Ա. ԽՄԲԱԿ Պայէրն Միւնիխ (Գերմանիա) - Լիոն (Ֆրանսա) Սեյլթա (Սկոտլանդ) - Անտրըլէիք (Պելճիքա)
- Բ. ԽՄԲԱԿ Արսենալ (Անգլիա) - Տինամո Քիեւ (Ուքրաինա) Ինթեր Միլան (Իտալիա) - Լոքոմոթիւ Մոսկուա (Ռուսիա)
- Գ. ԽՄԲԱԿ Մոնաքո (Ֆրանսա) - Տեփորթիո Քորուսա (Սպանիա) Փ. Ա. Վ. Այնտիվըն (Հոլանտա) - ԱԷՔ Արթըք (Յունաստան)
- Դ. ԽՄԲԱԿ Օլիմպիկարս (Յունաստան) - Կայաքասարայ (Թուրքիա) Ռեալ Մոսկուա (Սպանիա) - Եուվենթուս (Իտալիա)

ԵՐԷԿ գիշեր տեղի ունեցած ութ մրցումներէն ետք, այժմ Ե., Չ., Լ. եւ Բ. խմբակներուն դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Մ. Եունայթեդ	3	0	1	10	2	9
2.- Շթուրկարթ	3	0	1	8	4	9
3.- Ռեյնսըրս	1	1	2	3	6	4
4.- Փանաթինայքոս	0	1	3	2	11	1

● Չ. ԽՄԲԱԿ

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Ռեալ Մատրիտ	3	1	0	8	3	10
2.- Փորթո	2	1	1	6	6	7
3.- Մարսէյ	1	0	3	7	8	3
4.- Պեյլըրս	0	2	2	1	5	2

● Լ. ԽՄԲԱԿ

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Չելսի	3	0	1	7	3	9
2.- Պեյլըրս	2	0	2	4	4	6
3.- Սփարթա	1	1	2	4	5	4
4.- Լաքո Ռոման	1	1	2	5	8	4

● Բ. ԽՄԲԱԿ

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Ս. Սէ. Միլան	2	1	1	2	1	7
2.- Այաքս	2	0	2	5	4	6
3.- Սեյլթա Վիկո	1	2	1	4	4	5
4.- Ֆ. Ք. Պրիմ	1	1	2	2	4	4

ԱՅՍՕՐ տեղի ունենալիք մրցումներուն նախօրեակին Ա., Բ., Գ. եւ Դ. խմբակներուն դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Պայ. Միւնիխ	1	2	0	4	3	5
2.- Անտրըլէիք	1	1	1	2	2	4
3.- Լիոն	1	1	1	2	3	4
4.- Սեյլթա	1	0	2	3	3	3

● Գ. ԽՄԲԱԿ

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Տեփորթիո	2	1	0	4	1	7
2.- Մոնաքո	2	0	1	6	2	6
3.- Այնտիվըն	1	0	2	2	4	3
4.- ԱԷՔ Արթըք	0	1	2	1	6	1

● Դ. ԽՄԲԱԿ

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Եուվենթուս	3	0	0	8	4	9
2.- Ռ. Մոսկուա	2	0	1	5	5	6
3.- Կայաքասարայ	1	0	2	3	4	3
4.- Օլիմպիկարս	0	0	3	1	4	0

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՍՊՈՒՆԸ  
ԿԸ ՄԵՂԱԴՐՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ՑԵՂԱՇՐՋՈՒՄ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՑԱՆՑԱՆՔՈՎ

«Յանուն նոր Վրաստանի» կառավարական ընտրական դաշինքը ներկայացնող Թիֆլիսի Գլխավոր շրջանային մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրուած Գուրամ Շարաձե, որ ծանօթ է իր ծայրայեղ հայրենասիրութեամբ եւ կրօնական մտածողութեան հանդէպ արմատական վերաբերմամբ, երկ վրաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ռիչըրտ Մայլըր ամբաստանեց «պետական յեղաշրջում» կազմակերպելու յանցանքով: «Միացեալ Նահանգներու դեսպանը կը շարունակէ ամերիկացի յայտնի գործարար ձորձ Սորոսի սկսած գործը», յայտնած է ան եւ նշած, թէ «եթէ վաղը դժբախտութիւն մը տեղի ունենայ, կարելի է շնորհաւորել Ռիչըրտ Մայլըրի, իր յաջող առաքելութեան համար»: «Վրաստանի մէջ ապակայունութիւն կը նախապատրաստուի», յայտարարած է Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձեի պլոքին մաս կազմող պատգամավորը:

ՊԻՏԻ ԶՎԱՐԱՆԻՆՔ  
ՀԻՄՆՈՒՄԱՅԻՆ ԻՐԱՔ ՈՒԺ  
ՂԿԵԼՈՒ

Կ'ԸՍԵ ԹՈՒՐԲԻՈՅ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ  
ԱՆԳԱՐԱ, 4 (ԱՅՓ).- Թուրքիա իրեն կը վերապահէ հիւսիսային Իրաք յաւելեալ ուժեր ղրկելու իրաւունքը՝ պայքարելու համար իր ապստանած ՔԱԿի անդամներու դէմ, ըսած է պաշտպանութեան նախարար Վեհաբ Կոնիւլ երեսփոխաններուն, Երեքշաբթի օր:  
Ան յայտնած է, որ Թուրքիա հիւսիսային Իրաք ուժեր ղրկած է երբ որ ատիկա անհրաժեշտ եղած է, պայքարելու համար քիւրտ ըմբոստներու դէմ, շեշտելով, որ «այսօր պիտի չվարանինք ինչ ուժեր ղրկելու»:  
Սակայն Կոնիւլ, որ կը խօսէր իր նախարարութեան պիտուէին յատկացում խորհրդարանական մէկ նիստին ընթացքին, մերժած է բացայայտել 1997ին ի վեր հիւսիսային Իրաք հաստատուած պիտուութիւններուն թիւը:  
Կ'ենթադրուի, որ ՔԱԿի շուրջ 5000 անդամներ ապստանած են այդ շրջանը:

ԹՈՒՐԲԻՈՅ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ  
ԿԸ ՔՆՆԱՐԿԵ ՆԱԽԿԻՆ  
ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԿԱՍԿԱԾԵԼԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՆԳԱՐԱ, 4 (ԱՅՓ).- Թուրք երեսփոխաններ Երեքշաբթի օր սկսած են քննարկել տեղեկագիր մը, որ փտածութեան առնչուող խորհրդարանական քննութիւններու կոչ կ'ուղղէ: Տեղեկագիրը կը վերաբերի նախկին վարչապետներ Պիլիք Էճեմիթի եւ Մեւնուր Երլմաչի, ինչպէս նաեւ 23 այլ նախկին նախարարներու:  
Նախնական քննութենէ մը ետք կառավարութեան եւ ընդդիմադիր երեսփոխաններու կողմէ պատասխանուած տեղեկագիրը կը թելադրէ, որ խորհրդարանը քննութիւն բանալ անցեալ տասնամեակին պանապան ծրագիրներու մէջ Կեղծարարութեան շուրջ, որոնք երկրին միլիտար տոյարներ արժած են:  
Երկու կողմերէն աղբիւրներ ըսած են, թէ Երլմաչ իրենց թիրախներէն պիտի ըլլայ, սակայն ո'չ Էճեմիթ:

«ՔԱՅԻՏԱ»Ի  
ՄԻԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ  
ՉԱԽՈՂՈՒԹԵԱՆ ԿԸ ՄԱՏՆՈՒԻ

ՌԻԱՏ, 4 (ԱՅՓ).- Մեյնտական Արաբիա Երեքշաբթի օր յայտարարեց, թէ ապահովութեան ուժերը յաջողած են ձախողութեան մատնել «սատանայական» դաւ մը, որ ծրարուած էր «Քալիտա»ի կողմէ եւ որուն նպատակն էր Ռամատանի ընթացքին իսլամ ուխտաւորներ սպաննել Մեքքէի մէջ:  
Ապահովութեան ուժերը Երկուշաբթի օր Մեքքէի մէջ բախում ունեցած էին պիտուներու հետ, սպաննելով անոնցմէ երկուքը: Ներքին գործոց նախարար իշխան Նայէֆ Պըն Ապտէլապիլ ըսաւ, որ երկու պիտուներ անձնատուր եղան եւ չորս ուրիշներ՝ ձերբակալուեցան: Անոնցմէ չորսը սեղուցիներ էին, մէկը՝ եգիպտացի եւ մէկ հոգի ալ Չաւէն: Բոլորն ալ «Քալիտա»ի անդամներ են, աւելցուց նախարարը: Ան ըսաւ նաեւ որ «Քալիտա»ի հետեւորդները կ'ուզեն երկիրը սարսափի կեդրոնի վերածել:

ՀՈԼԱՆՏԱՅԻ ԹՐՔԱԿԱՆ...  
Շարունակուած Ա. ԷջԸԸ

Հոլանտայի մէջ Թուրքիոյ դեսպան Թաշան Իլտէմ յայտարարեց, թէ դեսպանատունը նախապէս որեւէ սպառնալիք չէ ստացած, այսուհանդերձ յայտնեց, թէ Հոլանտական իշխանութեան կողմէ դեսպանատան գրառուած են ապահովական յանձնարար միջոցներ, հակառակ իր բնական կողմի պահանջներուն: Նոյնանման բովանդակութեամբ յայտարարութիւն մը հրատարակեց Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը Անգարայի մէջ:  
Հոլանտայի ներքին գործոց նախարարութեան բանբեր ժըր կարգին տեղեկացուց, որ նախարարութիւնը ստացած է իր բնական դեսպանատան չորսը ապահովութեան մակարդակը բարձրացնելու պահանջ, սակայն հիմնուելով ոստիկանութեան եւ հետախուզական աղբիւրներու այն եզրակացութեան, թէ այդպիսի անհրաժեշտութիւն չկայ, մերժած է իր բնական առաջարկը:

ԻՐԱՔ  
ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ԴԵՍ  
ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ  
ԱՆԸՆԴՄԵՋ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Իրաքի մէջ ամերիկացի 16 պիտուներու սպանութենէն օր մը ետք, նախագահ ձորձ Պուշ յայտարարած է, որ Մ. Նահանգներ «քսալ խոյս պիտի չտան» իրաքէն:  
Ան խօսքի մը մէջ ըսած է, թէ Իրաքի մէջ «թշնամին կը կարծէ, թէ Ամերիկան խոյս պիտի տայ: Այդ պատճառով անոնք անմեղ քաղաքայիններ, ընկերային ծառայողներ եւ օտար ուժեր կը սպաննեն»:  
Ամերիկեան Քոնկրէսը մինչ այդ Երկուշաբթի օր վաւերացուցած է 87,5 միլիարտ տոյարի անոր առաջարկը՝ կայունացնելու եւ վերակառուցելու համար Իրաքը եւ Աֆղանիստանը:  
Շուրջ 64,7 միլիարտ տոյար պիտի յատկացուի ամերիկեան պիտուրական գործողութիւններուն: 21,2 միլիարտ տոյար պիտի յատկացուի Իրաքի եւ Աֆղանիստանի վերակառուցման եւ կայունացման:  
«Այս գումարները, ինչպէս նաեւ միջազգային նուիրատուներու կողմէ հետզհետէ աճ արձանագրող օժանդակութիւնները, կենսական պարակցութիւն պիտի հայթայթեն Իրաքը ապահով դարձնելու եւ օժանդակելու անոր ժողովուրդին ինքնակառավարման փոխանցումին», ըսած է Պուշ:  
Գետնի վրայ, ամերիկացիք կը շարունակեն գոհեր տալ: Երէկ Պաղտատի մէջ, պիտուր մը սպաննուած է եւ երկու ուրիշներ վիրաւորուած՝ պայթումի մը պատճառով:  
Մայիս 1ի Ուաշինկթընի այն յայտարարութենէն ետք, թէ մեծ բախումները վերջ գտած են, 141 պիտուր սպաննուած է: 6 շաբթուան ամերիկեան յարձակողական ընթացքին ամերիկացի 114 ցոյ արձանագրուած է:  
Իրաքի Քերպալա քաղաքին քաղաքապետը երէկ կոչ ուղղած է Մ. Նահանգներու, որ ժամկէտ մը ձշղեն իրենց ուժերը հեռացնելու համար երկրէն:  
Միւս կողմէ, իրաքի դատաւոր մը սպաննուած է Երկուշաբթի գիշեր Քերքուքի մէջ՝ ամերիկեան ուժերու կողմէ:

ՍՊԱՆԻԱ «ԱՌԺԱՄԱՐ» ՈՒԺԵՐԸ ԿԸ ՀՆՈՍՆԵ

Մինչ այդ, Սպանիա, որ Իրաքի գծով Մ. Նահանգներու բանալի մէկ դաշնակիցն է, երէկ յայտարարած է, թէ առժամաբար Պաղտատին պիտի հեռացնէ իր դեսպանատան անձնակազմը, պաշտօնապէս՝ երկրին մէջ «խորհրդակցութիւններու» համար, թէեւ կառավարական աղբիւրներ ապահովութեան հետ պիտեմէ աւելի վատթարացող կացութիւնը այսպէս չեն:  
Վարչապետ Խոսէ Մարիա Աննար շեշտած է, որ «առժամեայ եւ մասնակի» հեռացումը վերջնական ու անդառնալի չէ, եւ թէ դեսպանատան անձնակազմը պիտի վերադառնայ:  
Սակայն արտաքին գործոց նախարարութեան մէկ բանբերը խոստովանած է, որ վերջին օրերուն Իրաքի մէջ ապահովութեան հետզհետէ վատթարացող վիճակը տուեալ մը եղած է որոշումին կայացման մէջ:  
Սպանիա Իրաքի մէջ գետնի վրայ բանալի դերակատար մըն է: Անիկա ունի 1250 պիտուներ, որոնք լեհական հրամանատարութեան ներքեւ կը գործեն Պաղտատի հարաւային շրջանին մէջ:  
Սակայն Աննարի պահպանողական կառավարութեան ի նպաստ պատերազմին կեցումները եւ ուժեր ղրկելու անոր որոշումը հանրութեան կողմէ բողոքներու ղուր բացած են, իսկ Օգոստոսի կէսերուն երեք սպանացիներու սպանութենէն ետք ընդդիմութիւնը աւելի էս սրած է:


ՌԱԶԻՆԿՈՐԸ ԿՈՂՋՈՒՄԵ ԻՐԱՔԻ ԴՐԱՑԻՆԵՐՈՒՆ ԾԻԳԵՐԸ

Միւս կողմէ, Մ. Նահանգներ Երկուշաբթի օր ողջունած են Իրաքի դրացիներուն կողմէ յանձնառութիւն մը՝ սահմաններուն վրայ աւելի խիստ հակակշիռ պահելու գծով, արգիլելու համար օտար պիտուներու Իրաք թափանցումը:  
Դամասկոսի վեհաժողովը նաեւ դատապարտած է «ախաբեկչական ոմբահարումները», որոնք թիրախ կ'առնեն քաղաքայիններ, դիւանագէտներ եւ բարեօրինական կազմակերպութիւններու պաշտօնակներ:  
● ԲՐԻՏԱՆԻՈՅ պաշտպանութեան նախարարութիւնը երէկ յայտարարեց, թէ 31 ամեայ բրիտանացի պիտուր մը Իրաքի մէջ սպաննուած է անցեալ Ուրբաթ օր:  
● ՉՈՐՍԱ ամերիկացի պիտուրներ երէկ վիրաւորուեցան Պաղտատի մէջ, երեք ումբերու պայթումի հետեւանքով:

(ԱՅՓ)

ՇԱՐՈՆ ՉԵՌՆՈՒՆԱՅԻՆ  
ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ՄՈՍԿՈՒԱՅԷՆ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն չլաքողեցաւ Մոսկուայի համոզել, որպէսզի հրաժարի խաղաղութեան ձաբնու քարտէսը ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի որոշումի վերածելու ճիգերէն: Իսրայէլացի պաշտօնատարներ ըսին, որ Շարոնի տեսակետներուն հանդէպ պաշտօնատար հասկացողութիւն ցուցաբերեցին ռուս պաշտօնատարներ, որոնք սակայն չընդառաջեցին անոր առաջարկին:



Շարոն Երկուշաբթի երեկոյան երեք ժամ տեւողութեամբ հանդիպում մը ունեցած էր նախագահ Վլատիմիր Փութինի հետ, որմէ ապահանջած էր հրաժարի որոշումի ծրագիրէն, ինչպէս նաեւ «ախաբեկչական» կայունակերպութիւններու կարգին դատել լիբանանեան Հըզպալլա եւ պաղեստինեան ծայրայեղական շարժումներ: Իսրայէլացի պաշտօնատարներ ըսին, որ Փութին եւ անոր խորհրդատուները մերժած են անմիջապէս պատասխանել Շարոնի: Պատուիրակութեան մէկ անդամը դիտել տուաւ, որ Շարոն բացարձակ անկեղծութեամբ խօսած է Փութինի հետ, որուն յայտնած է, թէ Իսրայէլ կը մերժէ խաղաղութեան ձաբնու քարտէսի ծրագիրին ՄԱԿի որոշումի ուժ տալը:  
Իսրայէլացի այլ պատուիրակ մը շեշտեց, որ ախաբեկչութեան դէմ պայքարը միջազգային հարց է, հետեւաբար Մոսկուայ ալ պետք է անոր առնչակից ըլլալ եւ ախաբեկչական կազմակերպութիւններու իր ցանկին վրայ աւելցնել Հըզպալլայի եւ պաղեստինեան շարժումներու անունները: Ան աւելցուց, որ պետք չէ մոռնալ որ չէնէն ախաբեկչները կապեր ունին Միջին Արեւելքի մէջ:

ԵՌՐՈՂՊԱՐՈՍԻԹԸՐԻ ԶՈՐԱՆՈՅԶԻՆ  
ԱՐԴԻԻՆԵՆԵՐՈՒՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ԵՌՐՈՂԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ  
ԿԸ ՓՈՐՁԵՆ ՄԵՂՄԵԼ  
ԻՍՐԱՅԷԼԻ ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Երրոպական Յանձնաժողովի նախագահ Ռոմանո Փրոտի մտախոհութիւն յայտնեց Երրոպական Միութեան մէկ հարցախոյզին հանդէպ, որուն մասնակցող երրոպացիները համաշխարհային խաղաղութեան գլխաւոր սպառնալիքը նկատած են Իսրայէլը: Փրոտի շեշտեց, որ արդիւնքը չի ներկայացնէր Ե. Միութեան քաղաքականութիւնը: Փրոտի հերքեց սակայն որ հարցախոյզը քաղաքական հեռանկարներով, չէ կազմակերպուած: Փրոտի աւելցուց, որ արդիւնքը հարցախոյզին մտախոհիչ է, որովհետեւ անիկա ցոյց կու տայ, թէ տակնին առկայ է կողմնակալ կեցումը մը, որ անմիջապէս պետք է դատապարտուի, որովհետեւ անիկա առիթ կրնայ տալ հակահրեակական աւելի ընդհանուր կեցումաձքի մը:  
Երրոպարոմբերի կողմէ կազմակերպուած հարցախոյզին մասնակցած 500 երրոպացիներուն 59 առ հարիւրը ըսած էր, թէ Իսրայէլ թիւ մէկ սպառնալիքն է համաշխարհային խաղաղութեան: Իսրայէլ ընդված ու դատապարտած էր հարցախոյզն ու Ե. Միութիւնը:  
Միւս կողմէ, Միջին Արեւելքի մէջ Ե. Միութեան յատուկ պատուիրակ Մարք Օթը ըսաւ, որ հարցախոյզին պարզած արդիւնքը անհրաժեշտ կը դարձնէ երկխօսութիւնը Իսրայէլի եւ Ե. Միութեան միջեւ: Օթը եւս շեշտեց, որ հարցախոյզը չի ներկայացնէր երրոպացի ղեկավարներուն տեսակէտը:

«ԵՌԻՔՈՍ»Ի ԴԵՍ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՋ  
ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՀԱՆՋՈՒԻ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին երէկ փորձած է փարատել «Երիքոս»ի հարցով ներդրումներ կատարողներու մտահոգութիւնը, խոստանալով, որ պետութիւնը ետգարձ պիտի չկատարէ սեփականացման վիճելի համաձայնութիւններու գծով, որոնց վրայ կերտուած է յետխորհրդային Ռուսիոյ տնտեսութիւնը:  
Հոռոմի մէջ վաղը կայացուելիք Ռուսիա - Ե. Միութիւն վեճաժողովին նախօրեակին, Փութին իտալացի թղթակիցներու շեշտած է, որ ամբողջովին կ'ընդգիծանայ սեփականաշնորհումի արդիւնքները վերատեսութեան ենթարկելու գաղափարին, «նոյնիսկ եթէ արդիւնքները իսկապէս շատ հեռու են»:  
Սակայն, ըսած է ան, «ամէն մարդ պետք է սորվի օրէնքի հիմամբ ապրել եւ ենթարկուի երկրին օրէնքներուն»: Մինչ այդ, Երրոպական Յանձնաժողովը երէկ ըսած է, թէ Հոռոմի վեճաժողովին ընթացքին Ռուսիայէն «յստակացումներ» պիտի ուզէ «Երիքոս»ի տագնապին գծով, գգուացնելով, որ անիկա կրնայ ծիտականանայ սեփականաշնորհումի արդիւնքները վերատեսութեան վրայ «Երրոպական տնտեսական միացեալ շրջանի մը»:  
Հաղորդագրութեան մը մէջ, անիկա յայտնած է, որ Յանձնաժողովը պիտի վերլուծեն օրէնքի արդար եւ առանց խտրականութեան կիրարկումին անհրաժեշտութիւնը՝ ռուսական իշխանութիւններուն կողմէ:  
«Երիքոս»ի հիմնադիր Միխայիլ խոտորքովաքի փաստաբանը երէկ երրոպացի ղեկավարներուն կողմէ ղաժ է արծարծելու անոր բանտարկութեան հարցը, շեշտելով, որ անիկա քաղաքական դրդապատճառներ կը հետապնդէ: խոտորքովաքի 10 օր առաջ ձերբակալուած են արգելափակուած է գեղծարարութեան յանցանքներով, որոնք քաղաքական արշաւ մը կը նկատուին կրեմլին կողմէ՝ անոր մեծագոյն քննադատներէն մէկուն ղէմ:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱԶԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԵԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՈՒՐԴԸ  
Կը ներկայացնեն՝  
**ԱՌՆԱԷ**  
ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ  
Նոյնմեր 18ին  
ԻԻՆԷՍՔՕ ի սրահին մէջ  
երեկոյան 8:30-ին  
տոմսերը՝  
Trading Places 01 611600, CD-Théque Ashrafieh - ABC.  
Համազգային գրախանութ, Կարմիր փողովաձուլ  
եւ Ազգային Դպրոցներէն  
**BYBLOS BANK**